ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էդուարդ Մարտիրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ գլխավոր տնօրեն

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

   Ավստրիա, քաղաք Վիեննա, սեպտեմբերի 16-ից 18-ը, 2024թ.

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) գլխավոր համաժողովի 68-րդ նստաշրջանին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

   Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) 68-րդ Գլխավոր համաժողովը (ԳՀ) տեղի ունեցավ Վիեննայում՝ համախմբելով տարբեր անդամ-պետությունների ներկայացուցիչներին: Այս ամենամյա միջոցառումը բարձր մակարդակի քննարկումների հարթակ է միջուկային տեխնոլոգիաների, անվտանգության և դրանց խաղաղ կիրառման տեսանկյունից: Համաժողովն առանցքային իրադարձություն է, որտեղ անդամ-պետությունները համագործակցում են միջուկային էներգիայի, զենքերի չտարածման և տեխնիկական համագործակցության ծրագրերի հետ կապված մարտահրավերների շուրջ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Հայաստանի պատվիրակությունն ակտիվ մասնակցություն ունեցավ ԱԷՄԳ-ի 68-րդ Գլխավոր համաժողովում՝ կարևորելով երկրի նվիրվածությունը միջուկային էներգիայի, անվտանգության և միջազգային համագործակցության հարցերին:

   ՀՀ պատվիրակությունը շուրջ երկու տասնյակ հանդիպումներ ունեցավ միջազգային գործընկերների հետ:

16.09.2024 Հանդիպեցինք FRAMATOM ֆրանսիական ընկերության ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին համագործակցության ծրագրեր, ռադիոակտիվ թափոնների կառավարման, նոր դիզելային կայանի շինարարության և նոր միջուկային վառելիքի մատակարարմանը վերաբերող հարցեր:

ԱԷՄԳ-ի երաշխիքների դեպարտամենտի ներկայացուցիչների հետ տեղի ունեցավ գործնական հանդիպում: Քննարկվեցին մի շարք հարցեր, որոնք վերաբերվում էին ՀԱԷԿ-ին տրամադրվող երաշխիքների պայմաններին, գործառույթներին:
Հանդիպում ունեցանք Իրանի ատոմային էներգիայի գործակալության նախագահի տեղակալ Բեհրուզ Կամալվանդիի հետ, ում հետ ևս քննարկվեցին համագործակցության ծրագրեր:

17.09.2024 Նախարարի տեղակալ Հ. Վարդանյանը հանդես եկավ ազգային ելույթով՝ ներկայացնելով մասնավորապես ԱԷՄԳ հետ համագործակցության առաջնահերթությունները, խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման ոլորտում ՀՀ հանձնառությունները, ընթացիկ աշխատանքները և առաջիկա ծրագրերը: Իր ելույթում Հ. Վարդանյանը ընդգծեց գործակալության գործունեության գրեթե բոլոր ասպեկտներում ԱԷՄԳ-ի տարբեր կառույցների հետ Հայաստանի համագործակցության աներկբայելի կարևորությունն ու արդյունավետությունը:
ԱԷՄԳ-ի միջուկային ենթակառուցվածքների զարգացման բաժնի ղեկավար Լիլիա Դուլինեցի հետ տեղի ունեցավ հանդիպում, որի շրջանակներում քննարկվեցին համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր, ծրագրեր:
Ատոմային Էներգիայի Միջազգային Գործակալության և ԱՄՆ-ի համատեղ կազմակերպած «Հավելյալ փոխհատուցման կոնվենցիա միջուկային վնասի համար» միջոցառումը կարևոր փուլ է միջուկային վնասի փոխհատուցման և պատասխանատվության միջազգային համագործակցության և պատրաստվածության ամրապնդման առումով: Միջոցառումը նպատակ ուներ բարձրացնել իրազեկությունը և խթանել կոնվենցիայի անդամակցությունը՝ համաշխարհային մակարդակում:

18.09.2024 ԳՀ-ի շրջանակներում ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանը, ես, «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Մովսես Վարդանյանը, ՀՀ ՄԱԿ կոմիտեի նախագահի տեղակալ Վահե Գրիգորյանը հանդիպեցինք Ատոմային էներգիայի միջազգային գործակալության գլխավոր տնօրեն Ռաֆայել Մարիանո Գրոսսիի հետ, որի ընթացքում մասնավորապես քննարկվեցին Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման և նոր միջուկային բլոկների կառուցման ծրագրերը և այդ ուղղությամբ ԱԷՄԳ հետ փոխգործակցությունը: Հ. Վարդանյանը հրավիրեց Ռաֆայել Գրոսսիին 2026 թվականի աշնանը Հայաստան՝ ՀԱԷԿ-ի ՇԺԵ-2 ծրագրի ավարտը և նոր շահագործման ժամկետը երկարացնելու հետ կապված կայանի աշխատանքների մեկնարկին ծանոթանալու, ինչը դրական ընդունվեց ԱԷՄԳ ղեկավարի կողմից:
Հանդիպում ունեցանք ԱՄՆ էներգետիկայի քարտուղարի՝ միջուկային էներգիայի հարցերով տեղակալի պաշտոնակատար Մայքլ Գոֆֆիի հետ: Ատոմային էներգիայի գրասենյակը կենտրոնացած է մի քանի կարևոր նախաձեռնությունների վրա:
ԱՄՆ պետքարտուղարության միջազգային անվտանգության և չտարածման բյուրոյի՝ միջուկային էներգիայի հարցերով ավագ խորհրդական Ջասթին Ֆրիդմանի հետ տեղի ունեցավ հանդիպում, որի ընթացքում մեկ անգամ ևս նշվեց, որ ԱՄՆ կառավարությունը շարունակելու է օժանդակությունը ՀՀ գործող ատոմային կայանի անվտանգության բարձրացման և Շահագործման ժամկետի երկարացման (ՇԺԵ) ծրագրերի իրականացմանը, այդ թվում նաև ՀՀ էներգետիկ անվտանգությանը վերաբերող հարցերին, միջուկային վառելիքի մատակարարման և նոր մոդուլային բլոկների տեխնիկաէկոնոմիկական հիմնավորումների կատարմանը:

Հանդիպում ունեցանք նաև Եվրոպական Միության ներկայացուցիչների հետ, որի ընթացքում նշվեց, որ ԵՄ կշարունակի օժանդակությունը սթրես-թեստերի միջոցառումների և ռադիոակտիվ թափոնների կառավարման ծրագրերին:
ԵՄ կողմից նշվեց, որ ՀՀ պետք է արագացնի օժանդակման ֆինանսավորման համաձայնագրի շուտափույթ հաստատումը, քանի որ վերը նշված ծրագրերի ֆինանսավորումը կատարվելու է այդ համաձայնագրի հաստատման պայմաններում:
Հանդիպեցի «Ռոսատոմ» ՊԿ-ի նախագահի տեղակալ Կիրիլ Կամարովի հետ, որի ընթացքում տեղի ունեցան առողջ և կառուցողական քննարկումներ ու բանակցություններ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

68-րդ Գլխավոր համաժողովի ժամանակ քննարկվեցին մի շարք կարևոր խնդիրներ, որոնք վերաբերում էին ինչպես համաշխարհային, այնպես էլ հայկական միջուկային ոլորտներին:
Հայաստանի պատվիրակությունը համաժողովում քննարկեց ՀԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարացման ծրագրի զարգացումները՝ կարևոր ծրագիր, որը նպատակ ունի ապահովել կայանի շարունակական աշխատանքը: Բացի այդ, Հայաստանը վերահաստատեց իր դերը որպես ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության ծրագրերի առանցքային մասնակից, ինչը կենսական աջակցություն է տրամադրում միջուկային օբյեկտների անվտանգության կառավարմանը, ճառագայթային պաշտպանությանը և մարդկային ռեսուրսների զարգացմանը:
Անվտանգությունն ու պաշտպանությունը մնացին քննարկումների առաջնագծում: Նստաշրջանը անդրադարձավ միջուկային անվտանգության չափանիշների ամրապնդման անհրաժեշտությանը, հատկապես՝ վերջին համաշխարհային իրադարձությունների լույսի ներքո, որոնք ընդգծեցին արտակարգ իրավիճակների պատրաստության և ճգնաժամային կառավարման բարելավման անհրաժեշտությունը: Կարևորվեց նաև միջուկային նյութերի և օբյեկտների անվտանգության ապահովման հարցը՝ ԱԷՄԳ-ի «Միջուկային անվտանգության գործողությունների պլանի» իրականացման առաջընթացի վերաբերյալ զեկույցով:
Հայկական պատվիրակությունը քննարկեց ԱԷՄԳ-ի հետ համագործակցությունը՝ կայանում անվտանգության նոր համակարգերի ներդրման և սարքավորումների արդիականացման ուղղությամբ:
Հայաստանը վերահաստատեց իր դիրքորոշումը միջուկային էներգիայի վերաբերյալ որպես մաքուր և հուսալի էներգիայի աղբյուր:
Շատ անդամ-պետություններ վերահաստատեցին իրենց նվիրվածությունը՝ ազգային էներգետիկ ռազմավարություններում մեծացնելու ատոմային էներգիայի բաժինը՝ միջազգային կլիմայական նպատակներին հասնելու համար:
Հայաստանը կարևորեց միջուկային ոլորտի մասնագետների ուսուցումն ու զարգացումը: ԱԷՄԳ-ի հետ համագործակցության արդյունքում հայ մասնագետները հնարավորություն են ստացել անցնելու առաջադեմ ուսուցումներ և օգտվելու միջուկային ժամանակակից տեխնոլոգիաներից: Հայաստանը քննարկեց ԱԷՄԳ-ի հետ շարունակվող համագործակցությունը՝ այնպիսի մասնագետների պատրաստման ուղղությամբ, որոնք անհրաժեշտ են ՀԱԷԿ-ի անվտանգ շահագործման համար:

ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության ծրագիրը, որը նպաստում է միջուկային գիտության և տեխնոլոգիայի խաղաղ օգտագործմանը զարգացող երկրներում, բարձր գնահատվեց դրա ազդեցության համար: Անդամ-պետությունները քննարկեցին ծրագրի հետագա ներդրումները՝ շեշտադրելով միջուկային անվտանգության, բժշկական կիրառումների և սննդի անվտանգության ոլորտներում կարողությունների զարգացման նախաձեռնությունների կարևորությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱԷՄԳ-ի Գլխավոր համաժողովի 68-րդ հերթական նստաշրջանը վերահաստատեց Գործակալության կարևոր դերը ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման խթանման գործում՝ ապահովելով անվտանգության, պաշտպանության և չտարածման ամուր չափանիշներ: Անդամ-պետությունները վերահաստատեցին իրենց նվիրվածությունը՝ միջուկային գիտությունն ու տեխնոլոգիան օգտագործելու կայուն զարգացման նպատակներով և գլոբալ մարտահրավերների հաղթահարման համար: Այս նստաշրջանի արդյունքները հստակ ճանապարհային քարտեզ կազմեցին ԱԷՄԳ-ի ապագա առաջնահերթությունների համար՝ կենտրոնանալով նորարարության, համագործակցության և միջուկային էներգիայի անվտանգ ընդլայնման վրա:
Միջոցառումը բավականին արդյունավետ և ինֆորմատիվ էր առաջին հերթին ակտիվ քննարկումների շնորհիվ:

Քննարկումներն ու բանակցություններն ընթացել են առողջ և կառուցողական, բարենպաստ աշխատանքային մթնոլորտում, և բավականին արդյունավետ են եղել նպատակին հասնելու տեսանկյունից:

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**